Մեծ է առած-ասացվածքների պատմաճանաչողական, սոցիալ-քաղաքական և գեղարվեստական նշանակությունը: Առածներն ու ասացվածքները իրենց բանաստեղծական պատկերավորման, ներդաշնակ խոսքի հատկություններով, բովանդակության ուղղակի և այլարանական դրսեորումներով ունկնդիրների վիա զգայական մեծ ներգործություն են ունենում: «Ժողովոդական լեգի ընտիր բառերը, - գրում է Հովհ.Թումանյանը, - սեղմ ու սերտ, պատկերավոր ոճերը, այարգ ու շքեղ ձևերը, եսօք արդեն ամենաթանկ զարդերն են համարվում հայ գրողի երկերի մեջ»⁴⁸:

Կ.Մելիք-Շահնազարյանը գրի է առել նաև շուտասելուկներ: Որպես նանկական ժողովոդական բանահյուսության կատակային, բանձևային ասույթ՝ այն տաղաչավորեն բաղկացած է մի քանի անդամներից, որոնց մեջ գեղիշխող նույնական բառերի, նույն կամ նման բաղաձայն հնչյունների կոկնությունները դժվարացնում են ճիշտ արտասանությունը: Բանձակարգ Կ.Մելիք-Շահնազարյանի գրի առած հինգ շուտասելուկներից հեակյալը «Չալ ծտին, չալ ծտաճուտ» նույնությամբ հայտնի է «Լեռ-

⁴⁷ Լաֆարգ Պ.. Очерки по истории культуры, М.-Л., 1926, с. 53:

⁴⁸ Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 395:

նալին Ղարաբաղի բանահյուսությունը»⁴⁹ ժողովածուից», իսկ մնացածները ևս իրենց տարբերակներն ունեն: Համեմատության համար ներկայացնենք Մելիք-Շահնազարյանի գրի առաջ շուտասելուկներից մեկն իր համապատասխան տարրերակով:

«Բարով տեսանք իուփակապ, տրփակապ Ակուփ ապեր, ինձ միար մին խուփ կապե, մին կիփ կապե, մին տիփ կապե, անըմք տիմիմ իուփակապ, կիփակապ, տիփակապ Ակուփ ապեր»⁵⁰:

«Բոզբաշ իփող աշպազ Ակուփ ապեր, ինձ հետեւ սին աման բոզբաշ իփի, վեր քեզ ասին բոզբաշ իփող, աշպազ Ակուփ ապեր» (ասել է Օսեփ ապերը)⁵¹:

Շուտասելովկի արտասանող - կատարող կողմր, արագ կրկնելու պատճառով, հաճախ աղավաղում է առաջադրող կողմի րանաձեզ դժվար արտաբերության հետևանքով առաջացնելով ծիծաղաշարժ աղավաղումներ: Մանկական բանահյուսության այս տեսակը լեզուն վարժեցնում է ինչյունական ծիշտ արտասանության:

Հայ բանագիտության մեջ ինչպես ժողովրդական բանահյուսության մյուս ժամրերի, այնպես էլ հանելուկների նկատմամբ գիտական հետաքրքրությունը սկիզբ է առնում XIX դարի երկրորդ կեսերից: Հանելովկի վաղնջական նմուշներ և կիրաօնան վկայություններ պահպանվել են իին հնդիկների սուրբ գրքերից մեկում Ռիզվադյայում, Աստվածաշնչում, գրավոր ու բանավոր այլ աղյուրներում: Հայ մատենագիտության մեջ հանելուկը վկայված է VII դարից: XII դ. Ներսես Շնորհալին հորինել է մի քանի հարյուրի հասնող հանելուկներ, որոնցով հանելուկը իրու ժամր մտել է հայ գրականության մեջ: Պատմական Հայաստանի տարրեր ազգագրական շրջաններում հիսնելուկն ունեցել է

⁴⁹ Գրիգորյան-Սպանդարյան Մ.Մ., Եթոնային Ղարաբաղի բանահյուսությունը, Երևան, 1971, էջ 414:

⁵⁰ Գրքում զետեղված 13 շուտասելուկները ասել են Սիմոն Միքումյանը և Օսեփ ապերը:

⁵¹ Գլւթ, Կ.Կ.Մելիք-Շահնազարյան ֆ., գ.96:

⁵² Գրիգորյան-Սպանդարյան Մ.Մ., նշվ.աշխ., էջ 414:

տարրեր անվանումներ. առակ, հանք, ճեռոք, պընգըլ (Ղարաբաղ) և այլն: Հանելուկը դժվար լուծելի հարց է, որ մեծ մասամբ տրվում է փոխաբերության ձևով: Հանելուկ լուծողը պետք է գուշակի առաջադրված բանաձևերի տակ թաքնված առարկան: Հայկական գեղջկական միջավայրին, մինչև անցյալ դարի երկրորդ կեսերը, բնորոշ է եղել հանելուկների իմբակային գուշակման ժամանցային սովորությունը: Մեկն առաջարկել է հանելուկներ, իսկ մնացածներն աշխատել են գուշակել դրանք, նախապես հարցնելով լուծման առարկայի սեռը կամ տեսակը⁵²:

1878թ. Գրիգոր քահանա Մանդակումին վորձ է անում իրատարակնուու ժողովրդական հանելուկների առանձին ժողովածու և հատուկ հայտարարությամբ դիմում է ժողովրդին մոտ կանգնած մտավորականներին բնիկ ազգային հանելուկներ գրի առնելու և իրեն ուղարկելու իւսուրանքով⁵³: Թեև այդ ազգանպաստ նախածեռնությունը չի իրականանում, սակայն ուշագրավ է, որ նոյն թվականի սեպտեմբերի 7-ի թվակիր նամակում Մանդակումին հայտնում է, որ Կ.Ա.Ելիք-Շահնազարյանի հանելուկների հավաքածուից երեսուն միավոր ընտրել ու նախապատրաստել է տպագրության և խորրում է «ղազճյալ ողքան կարելի է աշխատել հավաքելու հատընտիր հանելուկներ, կարող եք թարգմանել օտար ազգերեն ևս»⁵⁴:

Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդում պահպանվել են Ղարաբաղի բարբառով նրա կողմից գրի առնված 140 միավոր հանելուկներ՝ «Պընգըլ» և «Պընգլեր»⁵⁵ խորագրով, որոնք հայտնի են նաև նոյն ազգագրական շրջանի ուշ գրառումներից ու տպագիր աղյուրներից⁵⁶: Լինելով գերազանցապես ժողովրդական ստեղծագործություններ՝ Կ.Ա.Ելիք-Շահնազարյանի գրառու հանելուկները (1880- 1935) ընդգրկում են ժողովրդի կյանքը, կենցաղն ու սովորություն-

⁵² Սրվանձտյան Գ., Ամանանա, Կ.Պոլիս, 1876, էջ 319:

⁵³ «Աշակ», 1878, 115:

⁵⁴ Գլւթ, Կ.Կ.Մելիք-Շահնազարյանի ֆ., գ.145:

⁵⁵ Անդ, գ.95:

⁵⁶ Հանելուկներ Ղարաբաղի լեզվով, ՀԱ, 1930, էջ 596-601:

Երը, իսկ համելուկի առարկաները՝ ընտանի և վայրի կենդանիներն են, թռչուններն ու բույսերը, մարդու մարմնի մասերն ու գյուղատնտեսական գործիքները, տնային-կենցաղային իրերն ու երկիագործական աշխատանքի տեսակները, երկնային մարմիններն ու մթնոլորտային երևույթները:

Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդում պահպանվող «Երկինք և աստղեր» լուծման առարկայով «Խաղաքա ունիմ թափ տալ չո լինի, ոսկի ունիմ համրել չի լինի» համելուկի Ս. Դարույթյունյանի գրքում⁵⁷ տրված է ոյպես «Մին (Վ. մեծ) տափ (արտ) ունիմ վարվիլ չի, միջի քարը համբարվիլ չի» (Ծամախի, Նախիջևան, Զանգեզուր, Ղարաբաղ, Ղարաղաղ) հիմնական օրինակի տարբերակ: Գրքում տարբերակները բավական շատ են: Նշենք դրանցից ևս մի քանիսը.

«Երկեն կարպետ՝ ծալվիլ չի, վոեն մանոր քարեր՝ համբարվիլ չի» (Լոհի):

«Մամաս սավւան ունի՝ ծալել չի կինա, պապաս ստակ (որամ) ունի՝ համրել չի կինա» (Պրիմ):

«Դրյխլու (դրվագագարո) կարպետ ծալվիլ չի, եղակ ծալքերը հըմբարվիլ չի» (Ղարաբաղ - Վաղուհաս):

«Գոմշի կաշին ծալվել չի, խուրդա (մանը) փողը համրարվիլ չի» (Բորչալու - Լոհի) և այլն:

Ղարաբաղյան համելուկները հիմնականում սկեզում են հարցական բանաձևով՝ «Են իի՞նչն ա», «Են հու՞վիս»: Այսպես «Են իի՞նչն ա, ծոռ կյեշի, ոյուզ քինա» (գութան), կամ «Են հու՞վիս վեր ինքը երկու հոքի ա, գոտին է երկիւ հոքու» (Ժիրան և այլ մրգեր), «Ես իի՞նչ ա, վեր ամեն տարի ծնում ա, ամա մարթ չօնե» (պտղատու ծառ): Երբեմն համելուկները սկեզում են «Մին մինն օնինք» առարկայի հատկանիշը գաղտնագրող բառակապակցությամբ. «Մեզ մինն օնինք օխտը լեզվանի, կեռեք չօնի մարդ կնծի» (ալենջար - Եղինջ), կամ «Մեզ մինն օնինք, աշխաըքս կպուկի կյա տանը վեր ընգնի» (ման-

գաղ և գերանդի), «Մեզ մինն օնինք մին վըննանի, խուսես կը կյա կլխտանե» (սունկ):

Կ. Մելիք-Շահնազարյանի գրի առած հանելուկներում երբեմն հարցը առաջադրվում է լուծման առարկայից հետո, օրինակ «Փրսըվեր տինիմ՝ լցնե, պրտվեր տինիմ՝ տրտակե, իի՞նչ աման ա» (փափաղ - գլխարկ): Դարցման ուղղակի բացակայության դեպքում՝ համելուկի րանածեկի տակ թաքնված առարկան ինքնին հարցում է արտահայտում. «Մսե լուլա, աըկաթ գյուլլա» (լուլաքյաբար). կամ «Վարեցի թթի, փսավ հորի, հոռան մին ճողնը տյուս եկավ, վեչ թթի ար, վեչ հորի» (ջորի): Դամելուկներում ուրվագծվում են ժամանակի սոցիալական հակասությունները, անհավասարությունն ու անարդարությունը: Օրինակ՝ «Են իի՞նչն ա, շինողն ուրիսանա, մեչը մտնողը չիմանա, հարուստն ու աղքատը ունենա» (ղագաղ):

«Դամելուկները կյանքում ունեցել են գործնական կիրառություն, ինուց անտի կմնցաղավարել են իբրև մտավոր ունակիւթյունները գարգացնող, բանականությունը մարգող մի մտախաղ, ողոշակի սահմանագատվելով գգայական հաճույք պատճառող կամ բարոյա-կիթական նապատակներ հետապնդող բանահյուսական մյուս ժամբերից»⁵⁸: Իսկ նոր ժամանակներում հանելուկե ժանըը կարծես թե «մանկացել ե»: Այն կարևորվում է դեռ նոր աչք բացող մանուկների համար իբրև շրջապատող աշխաըի ճանաչողության միջոց:⁵⁹

Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդում պահպանվում են նաև ղարաբաղյան օրինանքի⁶⁰ (118) և անեօքի⁶¹ (214) նմուշներ: Անեօքի ձեռագիր նմուշները գրի են առնված 1870-1880թ. «Ղարաբաղցիների հայիոյանքը» վիրնագրի տակ: 1928թ. հրատարակվում է Կ. Մելիք-Շահնազարյանի բանահյուսական հավա-

⁵⁸ Դարությունյան Ս., նշվ. աշխ., էջ Ը:

⁵⁹ Հածօնուկօս Դ., Զագագքի ռուսական համելուկներ, Երևան, 1965, էջ 8:

⁶⁰ ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, գ. 94:

⁶¹ Անը, գ. 93:

* Ժանրի այսօրվա ըմրոնմամր հավաքածուի նմուշները հայիոյանք չեն, այլ անեօքներ:

քածուի մի մասը «Ղարաբաղի բարքերեն» վեր-
նագրով. որը ներկայացնում է օրինության ու
անեծքի նմուշների մի փունջ⁶²:

Անեծքը խոսքի հմայական բանածև է, ուր
արտահայտվում է անիծողի չար ցանկությունը
որևէ անձի, առարկայի, կենդանու կամ երևոյ-
թի նկատմամբ: Անեծքը կիրառվել է իրու ագ-
դող միջոց նյութական կամ հոգևոր արժեքները
պահպանելու համար: Անեծքը կազմարանա-
կան միավոր է նաև երդումներում ու հմայական
աղոթքներում:

Անեծքները, օրինանք-բարեմաղբություննե-
րը, երդումները, հիշոց-հայկուլանքներն ու փա-
ղաքական խոսքերը, ինչպես ընդհանուր, այն-
պես էլ հայ լեգիսբանության մեջ ընդունված է
համարել «ցանկության խոսքեր»⁶³: «Ցանկու-
թյան բանածևերից գերբնական-հմայական գո-
րություն է վերագրվում միմիայն անեծքներին,
օրինանք-բարեմաղբություններին, երդումնե-
րին և հմայական աղոթքներին: Մնացածները,
այսինքն հիշոց-հայկուլանքներն ու փաղաքա-
կան խոսքերը գուրկ են հմայական ներգործու-
թյան գորությունից. դրանց իրագործմանը ոչ՝
ասացողներն են հավատում, ոչ էլ Ենթակա
լսողները. դրանք թողնում են սոսկ տիևած կամ
հաճելի տպավորություն: Մինչդեռ անեծք-օրի-
նանքների ու երդումների իրագործմանը հա-
վատում են շատերը, որի հետևանքով էլ առա-
ջանում է երկյուղ դրանց նկատմամբ. Վախե-
նում են, սովորաբար, դրանց ենթարկվելուց և
հաճախ խուսափում են գուր տեղն անիծել.
Երդվել, աղոթել և այլն»⁶⁴:

Բանագետ Ս. Ղարությունյանը անեծքները,
օրինանք-մաղբանքները, երդումներն ու կապ-
քի հմայալան աղոթքներն անվանում է հմա-
յալան-կիրառական րանահյուսություն և հայ
ժողովրդական անեծքներն ըստ իմաստի, սի-
պարաժանում է չորս գլխավոր խմբերի.

⁶² Ղարաբաղի բարքերեն. Ղարաբաղցիների օրինությու-
նը, ղարաբաղցիների անեծքը: Ժողովրդական ասույթներ,
ՀԱ, 1928, էջ 552 - 559:

⁶³ Արեգած Ա. Բայի եղանակներն արևելյան աշխարհա-
բարում, «Արարատ», 1912, էջ 177:

⁶⁴ Ղարությունյան Ա. Անեծքի և օրինանքի ժամանակակից առա-
ջանումները 1975թ., էջ 8:

1. Մարմնական պատիժների ցանկության,
2. Սոցիալ-քաղաքական պատիժների ցանկու-
թյան,

3. Բարոյա-մարմնական պատիժների ցան-
կության,

4. Հոգեկան պատիժների ցանկության ⁶⁵:

Կ. Սելիք-Շահնազարյանի հավաքածուում
առկա են հայկական անեծքների սյս չորս հիմ-
նախմբերին պատկանող նմուշներ: Այսպես,
սպանությամբ, որևէ փորձանքով կամ տառա-
պագին հիվանդությամբ անիծվողին ուղղված
մահվան ցանկությունը արտահայտվում է վեր-
ջինիս գրի առաջ հետևյալ անեծքներում. «Օձը
վգավատ պատ ընկնի», «Քերծն ի վեր ընկնի»,
«Տվարու նման պռանչիս», «Գյուլլաթակ տեռ-
նաս», «Գյուլլա նի կյա ջիգարիտ», «Թոքտ
ցմաքի», «Լղետ պտառվի», «Խրավվիս. իր-
վոս», «Մեսըտ եր թափի», «Պկետ խոռոգ վեր
կյա», «Աչքերըտ վեր տեռնան», «Զանտ ծկծ-
կոտվր», «Զանտ յաման օնի», «Զալամիշ ի-
նիս», «Նափասըտ կտրվո», «Զանտ վերթ ըն-
գնի» և այլն: Դետաքրքիր է Սելիք-Շահնազա-
րյանի գրի առաջ դարաբաղյան այս անեծքնե-
րի և նույն հիմնախմբին պատկանող «Անեծքի և
օրինանքի ժամանակակից առաջնորդ հայ բանահյուսության մեջ»
գրքում տպագրված նմուշների համեմատու-
թյունը. «Գյուլլան ջիգարզդ կենա (Ա.Ղարութ-
յունյանի հավաք.), «Գիլլուլիարավ նստիս, օռ-
չիս, տկըրծըռվոս» (ՂՃՀ VII 113), «Քեզ տեսնամ
դարայի (սկ) գյուլլեն սրտիդ նի կյա» (Ա.Ղա-
րությունյանի հավաք.), «Տասներկու պատրիկ
րանի ջանիդ վոեն» (ԷԱՃՁ 319), «Բարձիդ վրան
գարկիս» (ԲԳ 330), «Սկ ճալատներ (դահիճ-
ներ) քե պրտեն» (ԷԱՃՁ 311), «Արենկոլու ըլ-
նես» (ՂՃԱ 5) և այլն:

Օրինանքներն ու բարեմաղբությունները ըստ
իմաստային տիպերի բաժանվում են երկու
հիմնախմբի 1.ապահովրության և 2.պահպանու-
թյան բանածերի⁶⁶: Եթե առաջին խմբում գեր-
իշխողը օրինվոր անձի վրանկո մեկ այլ լավա-
գույնով փոփոխելու ապահովրության բաղդան-

⁶⁵ Ղարությունյան Ա. Աշվ. աշխ., էջ 199:

⁶⁶ Անդ, էջ 249:

քն է, ապա Երկրորդում՝ տվյալ վիճակի պահպանության ապահովությունը։ Ապահովության օրինանք-մաղթանքները ևս բաժանվում են միշտաքերի և Ենթատիպերի, որոնցից գլխավորներն են։

1. Կյանքի և Երկարակեցության,
2. Սյութական կյանքի պայմանների բարելավման ու կենսամիջոցների առատության,
3. Ունեցվածքի բարի վայելքի,
4. Հաջողության և հոչակի,
5. Փափազի կատարման,
6. Ամուսնության, սերնդի հարատևման ու բարօրության,
7. Երջանկության, ուրախության և սիրո,
8. Բարոյական ձիրքի, շնորհքի, ազնվության և արդարության,
9. Բարության, օրինության և ողոքության,
10. Հոգեկան հանգստի,
11. Հոգու փրկության ապահովությունն արտահայտող գաղափարները։

Բացի հիշատակվածներից, կա օրինական րանաձեի մի խունք ևս, որը ձևով բաղադրյալ տիպերից կազմված լինելով, ներկայացնում է տարբեր գաղափարների հարակցություն։ Դրանք անվանում են՝ տարբեր ցանկալի գաղափարների ապահովության օրինանք-մաղթանքները⁶⁷։

Կյանք և Երկարակեցություն ապահովող բանաձևների նպատակը՝ օրինվողին կամ նրա հարազատներին անփորձանք կյանք, կենսամիջոցների առատություն ցանկանալն է։ Կ. Մելիք-Շահնազարյանի գրի առաջ այս իմնախմբի բանաձևները հետևյալն են։ «Ումրուրը բոլ ինի», «Խոշավ անց կենա կյանքտ», «Արօքտ սիպտակե», «Զանտ սաղ ինի», «Ագկտ օրինվի, տիլարի», «Ցավ չի տեսնաս», «Փափուկ օտիս, դինջ ապրիս» և այլն։ Բավկական շատ են հավաքածուի պահպանության բարերանությունները, որոնց նպատակն է օրինվող անձի կամ նրա հարազատների կյանքի, ինչքի ու գործի պահպանության գաղափարը։ «Աստուծ օրինեք», «Խաչը քեզ պահապան ինի», «Խոխնեքս Աստուծ պահե», «Պահապան ինին քեզ

Աստծու հրեշտակնեն», «Սուրբերը քեզ պահին» և այլն, որոնց տարբերակները հայտնի են այլ ագգագրական շրջաններից։ Ապահովության օրինանք-մաղթանքներ. «Երկեն արև էլեմես» (ԱՐ XIX 114), «Ումրոր Երկար ըլնի» (ՃԺՍ 10), «Հալիվորես, ծերանաս, թռօան, ծոան տեր դառնաս (ՃԺՍ 10), «Փիր էխտիյար (ծերունի) ըլաս» (ԱՐ IX 194), «Ատեն ննզնիս Գարրիել հոքեհանին (ԹՄԿ 183), «Թռոան թռօղ տիսնաս» (ԷԱԺԶ 326) և այլն։

Պահպանության օրինանք-մաղթանքներ. «Աստված պահե» (ԱՐ IX 193), «Աստված արևել պահե», «Աստված ջուխտիկների պայա» (ԷԱԺԶ 327, 324), «Համուն հորը քեզ պահե պահպանե» (ԷԱԺՍ 131), «Քյուրուստուս պեհե միկ հատիկիտ» (ԱՈւ 116), «Աստծու հրեշտակները քգի պահապան էլնին» (ԷԱԺԶ 328), «Աստծու աշն ու խաչը վըեղ պահապան ըլնի» (ԷԱԺԶ 128) և այլն⁶⁸։

Կ.Մելիք-Շահնազարյանի բանահյուսական հավաքածուում տեղ է գտնել «Պարով կանանց կյարմուր կայիմ» Երիտասարդներին ամենուրեք երջանիկ ամուսնություն մաղթող, տարածված բարերանությունը։ Խոկ բանահավաքի գրառած ծննդկանի առողջության ապահովության մաղթանքներին՝ «Պարով մին դոչ տղա պիրիս», «Ծոցտ վեսկավ լիգը ինի», «Օիծաղտ պիրանատ վեչ պկասի», «Աստված քեզ շատ ժառանգ տա», «Պիհապան ինին քեզ Ասծո հրեշտակնեն», «Փափաքտ Աստուծ կտարի» հաջորդում են մանուկների աճմանն ու բարգավաճմանն ուղղված բարեմաղթությունները։ «Ծլիս ծաղկիս», «Հորավ-մորավ ինիս», «Պարի ժառանգ ինիս», «Վենտ քարու նի չի կյա», «Զրավար ինիս», «Խոշավ անց կենա կյանքտ»։ Մանուկներին վերաբերող բարեմաղթությունների մյուս գաղափարը ազմիկ, պատվական մարդ դառնալու բարոյագիտական ցանկությունն է։ «Եշնավ ժառանգ ինիս», «Համեշա խելունք ինիս», «Ի՞սավունքտ շատ ինի, լոիս տյալտ», «Պատվավոր ինիս», «Մեղրու նման քաղցր ինիս և այլն։

⁶⁷ Քարությունյան Ա., նշվ.աշխ., էջ 250:

⁶⁸ Անդ, էջ 263 - 264:

Կ.Մելիք-Շահնազարյանի գրառած օրինանք-մաղթանքներում երջանկություն, երկար կյանք է կամեցվել ոչ միայն օրինվորին. «Աստված քեզ մին հալալ ծծկերի հսցնի ու մին դոչ վերդի տա», «Կնեգտ քեփավտ ինի», «Ղաջրիութունա մարդտ կյա ուրիխանաս», «Սերդտ սովորատ մարդիտ նիետ անբառամ ինի», «Պորվակիր կյա նշանածատ, ուրիխանաս», «Տանտ մին սյուրու խոխա տեսնաս», «Ումբուըրտ բոլ ինի», «Փափաքտ Աստուժ կտարի», այլև նրա հարազատներին. «Բալեքտ ապրին», «Խոխեքրտ Աստուժ պահե», «Քու հար, քու մար օրինվոն», «ճոտերտ ապրին», «Մարդտ ապրի», «Տաքիրտ ապրի», «Քու հար ապրի»:

Մարդու նյութական միջոցների աճի ու բազմացման բաղդանքն է արտահալտված Կ.Մելիք-Շահնազարյանի գրառած ունեցվածքի առատության ապահովության օրինանք-մաղթանքներում. «Բինատ ավադ ինի», «Ճոնձըտ, կալտ ավադ ինի», «Խնեցետ համեշա հարիս», «Ճացտ բոլ ինի», «Ճանդտ ավադ», «Ճափուոտ վեսկավ լիգո ինի», «Վեզտ համեշա աչու կաղնի», «Ճոնձտ հարաքյաթլու ինի», «Ճիմքտ Աստուժ օրինե», «Պաշարտ առատ ինի» և այլն:

Դայ ժողովորդական անեքքներն ու օրինանքները, սերելով խոսքի հմայական գորության նախնական հավատալիքներից, պահպանվել են ուշ շրջանի ըմբոնումներին գուգահեն և ցայսօր լայնորեն կիրառվում են՝ հատկապես ժողովրդական լեզվում:

Ժողովրդագիտական առումով հետաքրքրություն են ներկայացնում Կ.Մելիք-Շահնազարյանի հավաքած, զրի առած և առաջարած ժողովրդական բժշկությամ վերաբերյալ նյութերը՝ «Տնային բժշկությունը Ղարաբաղում»⁶⁹ (1870թ., 18 թերթ), «Աստմին բժշկություն»⁷⁰ (1874 - 1880թ., 20 թերթ), «Ճիվանդությունների դեմ Ղարաբաղում ժողովրդական դեղեր» (ճարեր)⁷¹, (1879 - 1906թ., 8 թերթ): Այս ձեռագիր նյութերում տեղեկություններ կան բուժման ֆիզիկա-

կան եղանակների մասին (բուժում ոսկրացավոր և ատամնացավոր դեմ, քթի արյունը կանգնեցնելու, այրվածքը բուժելու, գլխացավոր կանխելու և այլն): «Զանազան հիվանդությունների դեմ» խորհուրդ է տրվում.

«Եթե աղիքը ցավի, լոշաւակի արմատը ծեծիր, ջրով 7 օր խմիր կը լավանա:

Մարդի ոտք կամ ծեռող եթե փուշ մտնի կամ երկաթ, սումբուլի քոքը ծեծիր, վրան դիր, հետո քաշիր հանիր:

Ղողոմի սերմը կլեպել, ուտել, անգլիական աղ խմել և հում սոխ ուտել. ջուր չխմել ու հաց չուտել այդ օրը. երկարողը կը մնի:

Եթե կինը կաթ չունենա, բողկը եվիր, տրորիր, ջուրը քամիր, մեղրով խմիր, կաթ կը բերե:

Եթե սիրտը ցավի, աղաջուրը լավ եփիր, ոտները մեջը դիր:

Եթեխայի քունը եթե չտանի, խաշխաշի ծեթը քունքը քսի, կը քնի:

Ծննդկանի ցավը մեղմացնելու համար ընկույզը իր կեղևով այրում են փոշի դարձնում, գինու և ծերի հետ խառն քսում գլխին:

Ցուրտ տարած տեղի վրա հին բամբակը օդու մեջ եփել դնել վրան» և այլն⁷²:

Ավելորդ չենք համարում նշել, որ նոյն հեղինակի ազգագրական րոնոյթի նյութերը ևս տեղ են գտել հանդեսի էջերում⁷³:

Կ. Մելիք-Շահնազարյանը կազմել է բարբառային բառերի բացատրական բառարան («Ճավելված Ղարաբաղի լեզվոր բառերի»⁷⁴, (1880թ., 26 թերթ), «Ղարաբաղի բառարանի հավելյալ թերթեր»⁷⁵ (14 թերթ), ուր բարբառային բառերին տրվել է զրական հայերենով բացատրություններ:

Կ. Մելիք-Շահնազարյանը ոուսերենից թարգմանել է Ավետրալիայի Նոր Գվինեա կղզում նախնադաշյան համայնական կարգերով ապրող նարդկանց՝ պապուասների կրոնական հա-

⁶⁹ ԳԱԹ, Կ.Կ.Մելիք-Շահնազարյանի ֆ., գ.98:

⁷⁰ Անդ, գ.99:

⁷¹ Անդ, գ.100:

⁷² Այսուհետ Ղարաբաղի եայ ազգագրության համար, ՂԱ, 1932, էջ 334 - 336:

⁷³ Բուղու գգելը և գործ գործելը Ղարաբաղում, Ազգագրան ծանոթագրություններ, ՂԱ, 1928, էջ 475 - 478:

⁷⁴ ԳԱԹ, Կ.Կ.Մելիք-Շահնազարյանի ֆ., գ.89:

⁷⁵ Անդ, գ.90:

վատալիքների, նախնիների պաշտամունքի, հմայության ու տոտեմիզմի մասին պատմող «Վայրենիները»⁷⁶ հոդվածը, ինչպես նաև քաղվածքներ և բարօմանել «Ուրանի»⁷⁷ օրենսվածքներ գրքից՝ ամուսնական իսլիմների, դրախտի, դժոխքում մեղավորների պատժի մասին:

Քաջածանոթ լինելով մայր ժողովորդի լեզվամտածողությանը, հոգևոր մշակույթին, սովորություններին ու կենցաղին Կ. Մելիք-Շահնազարյանը իր գրական ստեղծագործություններում հմտորեն է կիրառում ժողովրդական րառուրանը, անգամ ծիսական րամայուսության նմուշները: Եթե Աստծո րարեհաճությամբ առատ տեղումներ չկինեն, հայոց ճոշին՝ հայկական հարցը, ևս ավելի կլարվե «Ստամրուլա ծովի» աիդմի մեջ: Մտահոգ իր ժողովորդի ճակատագրով՝ Տնրլաչի Խաչանը հեռագիր է հղում «Լենսըստան, Ունոնդկենին - Մին էլ քրգանա շատ ու շատ խնթղը ըն ջաֆա քաշի շափառտ քի Ստամրուլա ծովը, ընդեղ մին ճոլի օնինք րաթմիշ հլած, տես տե՞ղն ա, իրես ա թա խոր, յա հիմչ հալի ա, մեշին ջան կա, թա ջանը տվալ ա անձանց մերոց տեռալ»⁷⁸:

«Ղարաբաղում մի սովորություն կա, - հիշեցնում է Կ. Մելիք-Շահնազարյանը, - երաշտ տարեն «խոխեքը մին վաղի տիկին» ըն շինը, կլիխին փավախ տիմը յա չարդար քըզմ, անըտոն ման կյամ, եղ, ծու հվիսքըմ, ճոլու խաղը ասըմ, վեր հինչ ա Աստուծ ուահմ ամի, անձրև կյա, ըղանձված արտերը տիլսրին, հասկ փոնին, քյասիր քիսուր ցանաք հացի կազուտ չի մնա»⁷⁹:

Դա հանցածանոթ ծիսական արազողություն է. մի ավելի կամ վայտե ծողի հագցնում են աղջկա պես, կերպարանք տալիս և ձեռներից րոնած՝ տնետուն ման են ածում: Ճոլին այլ ագգագընական շրջաններում կոչվում է Նուրի: Նուրինի վրա երդիկից ջուր են լցնում, որ անձըն զա, իսկ երեխաներին տալիս են կազագ, ծու, րոինձ և այլն՝ կոլեկտիվ ճաշկեցույթ կազմա-

⁷⁶ Անդ, գ.59:

⁷⁷ Անդ, գ.69:

⁷⁸ Տնրլաչի Խաչան, Զուռնա-Տմբա, գ.Բ, էջ 72:

⁷⁹ Անդ, էջ 67:

կերպելու համար: Նույն պաշտամունքի վերապրուկներն առկա են նաև այլ ժողովուրդների մեջ⁸⁰:

Դայոց գործերը ճիշտ և ճիշտ «ճուուն օրն ա ընգալ», և անգլիացիների. Ֆրանսիացիների, գերմանացիների՝ ճոլին ծովոց լույս աշխարհ հանելու ջանքերը արդյունք չեն տալիս, որովհետև «ընդրանց թարին վեչ ծու տիմոդ տյուս եկավ, վեչ վարսն ու պողտը եղ քսող»⁸¹, - գրուն նա:

**Ճոլի, ճոլի, ճոլ չկա
Խավեք անիմ եղ չի կա,
ճոլիմ ընգալ ա ծովը
Ծովան տյուս օնող չի կա:
Ծու պերեք թաթին տիմինք,
եղ պերեք վարսը քսինք,
Մեր ճոլու փայը տվեք
Օտինք, յանընք, քեք անինք...⁸²**

Ըստ ուսումնասիրողների ենթադրության՝ ագգագրական այլ շրջաններից քիչ հայտնի ծիսական ճոլի՝ երգը ջրի աստվածության հնագույն պաշտամունքի հիշողությունն է՝ պահպանված Ղարաբաղի հայոց կենցաղում⁸³:

Ժողովրդագիտական որոշակի արժեք ունեն Կ. Մելիք-Շահնազարյանի հավաքած նյութերը՝ Արցախում գործադրված կախարդության և գուշակության ձևերի մասին. «Կոռոնը չավիել», «Վախը եր քաղել», «Արտօմնա փոնել», «Զամի մեջ ջուր լցնել», «Կյարի քցել», «Տեմակ քցել» և այլն: Այսպես, օժիտ չունենալու պատճառով տանը մնալու դեպքում՝ Տնրլաչի Խաչանը իր յոթ «հսած-վասած» աղջիկներին պատվիրում է, որ «մինը փալչի տեռնա, մինը ըղըթաղար,

⁸⁰ Աբեյյան Ա., Երևեր, հ. 7, Երևան, 1975, էջ 77, Կորսին Գ.Փ., Պրազդնիկ «Երանակ» գործադրության հայոց ժամանակակից արժեքների մասին, 1927, էջ 17:

⁸¹ Անդ:

⁸² Տնրլաչի Խաչան, նշվ.աշխ., էջ 66:

* Ճոլի՝ անձրևաբեր, թե՞անձրևախափան ծիսական երգ լինելու վերաբերյալ գոյություն ունեն գիտական տարրեր անձականություն: Այս մասին ավելի մանրամասն տես՝ Թ. Դայրապետյան, Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկաղաղիր ընկալումների շուրջ. - «Պատմա-բանասիրական հանդես», 2004, № 3, էջ 217-227:

⁸³ Կառանցյան Գ., Историко-лингвистические труды, т. II, Ереван, 1975, с. 321-322:

մինը կյարի քցող, մինը վախ չափող, մինը սրտընա հվաքող, մինը մըռլու կիրեզմանու երա ճյուր խմըցնող»⁸⁴:

Գիր անելու արարողությունը 4. Մելիք-Շահնազարյանի կիղմից նկարագրվում է մանրամասն, իբրև ամբողջական համակարգ: Բոլոր սահմանային իրավունքակներում ֆելիետոնների հերոսները օգնության են կանչում «ջինդար Ակիփին», իետո՝ «ղլլաքին», որ արյուն առնի, հաջորդ օրն էլ «հաքիմին» են բերում, որովհետև Շուշվա Ղալում «մազթի ոյարդին ոյարման անողը փալչին ու ջինդարնըն», որ և էժան զներով են բուժում, և վատ բան չեն ասում, որ մարդու սիրտ կոտրվի: Մինչ «ջինդարը» սև հավ է մորթել տալիս և արյունով ծվե վոա խանգում ու տալիս, որ «օօջաղում» թաղեն, սև «քշկիո» է շինում, մեջը ասեղներ խրում և պատվորում գլխատակի բարձի մեջ տեղադրեն, մի երկար թորի վոա աջ ու ձախ գրոտում է, որ ջրի մեջ մտցնելուց իետո Գյուլումին խնացնեն, «ջամը» դնում է դեմը և սատանաներին կանչում. որին բախչում է, որին րոնում ու «ղարդուի» մեջ գցում, բերանը պինդ փակիւմ, որ գերեզմանոցում որևէ հանգուցյալի գլխի տակ թաղեն՝ ներս է մտնում վախ չափող Մարյանը: Թեժացած կիակից կարմրած «ծիհամը» հանելով՝ «իրեսին խըշահանից, Մարյամ Աստվածածնա անընը տվավ, նումը քսից ծիհանին, եղը ճիճաց ջամին մեջը թափվից: Զաման տյուս կալավ սառած մումին Եշից»: Վերջնական եգորակացությունը իետևալն էր՝ ծիուց է վախեցել, «պարգ ըրեվում ա, երնեկ հաքուն, անգուճնին, մարթը երան չափարախ քշոմ...»⁸⁵: Վերջում վախ չափող Մարյանը երաշխավորում է, որ երեք օր «ջամի ջրով» ծեռ ու ոտը լվանալուց իետո Գյուլումը բլբուլ կդառնա և չի մոռանում հիշեցնել, թե ինչպես անցած տարին նշանդրեցի օրը «Ալոնին մեծ ախճիկը րակլունան կլըկոնծի տըկավ, ամմա ընդրա ճակատը պենդ ար, իսկի այնընը քցից վեչ»⁸⁶, իսկ հաջորդ օրը ի-

րեն կանչեցին, գնաց վախը չափեց, ու ամեն ինչ տեղն ընկավ. Թե որքան կարևոր է չռփչու, վախ չափողի դերը ուղղոց կյանքում, տեղեկանում ենք Փարիզից Զավաեիր Պապակլոնձյանցի՝ մորը ուղարկած նամակից. «Ագի, դե ըրախին սավ Եշի, թռջիս վեչ պըկըմը չոփ մնա, շուտ շուտ չոփչուն նշանց տո, մին մին էլ վախը չավել տո, պեն ա վեր քշերնեն քոն չինի, ասի բուղոը լավաշը՝ կյան ա, յա չէ կյուլ պառակը, ոյաստի քոն կինի»⁸⁷:

Տմրլաչի Խաչամի գրական ստեղծագործություններում սովորական խոսքը համեմվում է՝

1. Օրինաքով. «Զանիտ մատաղ, իմ շանձախը ա, իմ շանձախը... շնուրիակալըն, հունցը ինձ ուրիսըցրալըս, Աստուծ էլ քեզ ուրիսըցնի»⁸⁸:

2. Անեծքով. «Վու՝, քու աչկիրը քուռանա, տյուս տրաքի, ումբըրըտ սև կենա, սերտըս ճաքից, ախճի մին ծեռքըտ տիր սրտիս տես հունց ա թրթորմ, օգում ա թա տյուս կյա, րա քու տոնը պըհշակ մնա, մահրում, մաղբուն մնաս տու, հունց վեր իմ դերյաս մահրում րրիր»⁸⁹:

3. Երդում-հավաստիացումով. «Ամմա րլըրան ա հա՞՝, քու արևն ըմ ասըն, հալա կուսպնես նի չեկած՝ գյուվայուվոնը եր ա ինըն, հշտեղան ասիս ծեն ա տամ, հշտեղան ասիս թլըրամու նման խբրնե ա պիրըն մին դադաղընը հսցրնըն»⁹⁰:

4. Նախալաշարմունքով. «Վու՝, սև ինի ընդրանց նշանտրիքն էլ, փսականչն էլ, լիա սօր վեր տանան տյուս եկի, սրտըմըս տպից, ըսեցե՝ ըեց՝ կիա մին գատա ինելու. անհարի ա. չարը ստանան ճաքե..»⁹¹:

⁸⁴ Քուղը լավաշը կամ եգեկելը հայ ժողովրդական րանահյուսության մեջ՝ նասնավորապես հեթիաթներում հանդիպող երեք մետր րարձությամբ, միաբանի, հովվակերա այն մարդ-հրեշն է, ում անունը տալով՝ գեղջուկ նայրերը երեխաներին վախ էին ներշնչում, որպեսզի նրանք չլացեն և արագ քնեն: Քիլակն, 1899, 35, էջ 556:

⁸⁵ Տմրլաչի Խաչամ, Զուռնա-Տմրլա, գ.Ա, էջ 156:

⁸⁶ Անդ, էջ 14:

⁸⁷ Անդ, էջ 9:

⁸⁸ Անդ, էջ 51:

⁸⁹ Անդ, էջ 11:

5. Ծաղրանքով. «Ախմի, ընտրա շնորքը կտրվի, հանց ա լիա քլրթանթուշ»⁹²:

6. Առած-ասացվածքով. «Չէ, քմմատաղ, էս մեզ սազ չի. ճպատր ուրան քոլան կր կտրին, մունք քյասիրու ախմիկ չընք օգել, հանցու վեր կյան մեր տոնր վեր կոխսին»⁹³.

Թարօմանելով և փրկարդելով ֆրանսիացի մեծ րանաստեղծ, Երգիծարան Լաֆոնտենի առակներից մի քանիսը, որոնցում գործող անձինք հանդիս են զալիս այս կամ այն կենդանու կերպարանքով՝ Կ.Մելիք-Շահնագարյանը դարձյալ օգտագործում է Ղարաբաղի րարրասի արտահայաչական հնարավորությունները:

«Կուռք պետնած էշը»⁹⁴ և «Ըսլանու մորթի կեցած էշը»⁹⁵ (Լաֆոնտենին օխշար) առակներից առաջինում էշը մեծամտանում է, մոռանալով, որ իր մեջքին բեռնած կուռքի համար են դեմք իրունկ ծիրում և ծնրադիր լինում.

Այ՝ ուզուն դուզադ,
Ասեցին ընդրան,
Դինչ ըս պարժենքմ,
Էտ պատիկ, փառքը,
Վեր սօր տալիս ըն,
Էտ մեջքիտ երան
Կուռքին մհար ըն.
Թա չէ դու իի՞նչ ըս,
Դինչ էլ չպեռնին,
Էշ ըս հու էշ ըս:

Իսկ երկրորդում՝ առյուծի մորթի հագած էշը, թյուրիմացության մեջ զցելով մարդկանց, ահ ու սարսափ է տարածում շրջապատում այնքան ժամանակ, քանի դեռ չեղու տեսել մորթու տակից դուրս պրծած ականջը.

Ամմա քոռ բաղտան
Անզուծին մինը

Սորթուն ժակավը
Տյուսն ար մնացալ
Ու մեր բոզ էշին
Տերտակ կրկաժին
Լյավիսաթա պերալ:

«Կերթնուկն ու կովը»⁹⁶ (Լաֆոնտենին օխշար) առակում այնքան մեծ է գորտի՝ կովի չափ աժդակա երևալու ցանկությունը, որ ուժ տալով պայթում է, իիշեցնելով «Ոտներդ Վերմակիդ համեմատ երկարացրու» առածր, որը սեփական ուժն ու կարողությունը սթափ գնահատելու րանահյուսական արձագանքն է:

Ժողովրդական խոսքի նշանակությունը ուրածը է գնահատել Յովե.Թումանյանը՝ նշելով, որ մեր լեզվու ու գրականության առողջ զարգացման համար պետք է մշտական տեղ հատկացնել հայրենի երկրի ժողովրդական րանավոր գրականությանը, նրա ամեն տեսակ ավանդություններին, հեթիաբներին, առակներին, առածներին⁹⁷: Գրականության մեջ ժողովրդական խոսքի ու առատվելական մտածողության դրսողումները Ա. Լուսկը համարում է «արտակարգ կենսունակ, արտակարգ րագմագան և միշտ հավակնող՝ կյանքի անպայման ուժալիստական արտացոլման համար»⁹⁸.

Կ. Մելիք-Շահնագարյանը, վարպետորեն օգտագործելով րանահյուսական տարրեր ժամաների գեղարվեստական հնարանքները, արտահայտչական, լեզվառնական միջոցների առանձնահատկություններ՝ կատարում է կենցաղային, հասարակական-քաղաքական, կյանքի հրատապ խնդիրներին վերաբերող կարևոր բնոհանրացումներ, հանգում միանգամայն առողջ ու լրջամիտ եղրակացությունների:

⁹² Անդ, էջ 63:

⁹³ Անդ:

⁹⁴ Տմուշի Խաչամ, Զուրնա-Տմբլա, գ.Բ, էջ 148 - 149:

⁹⁵ Անդ, էջ 182:

⁹⁶ Անդ, էջ 144:

⁹⁷ Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 140 - 141:

⁹⁸ Լուսե Ա., Հնակ, սիմվոլ, միֆ, Մոսկվա, 1982, ս. 443-444.